

Կարծիք

Արման Սաֆարյանի «Ժամանակակից մուլտիմեդիային հարթակների զարգացման միտումները և հեռանկարները (ՀՀ և ՌԴ ՋԼՄ-ների օրինակով)» թեկնածուական ատենախոսության մասին

Ժամանակակից մեդիայում տեղի ունեցող բուռն զարգացումներով պայմանավորված՝ մեդիատեսաբանները շարունակում են հետևել մեդիադաշտում կատարվող փոփոխություններին, համացանցում, նրանից դուրս մարդու և մեդիատեխնոլոգիաների փոխառնչության բնորոշ կողմերին, որոնց արդյունքում անխուսափելի է նոր հստակեցումների, ընդհանրացումների անհրաժեշտությունը: Այս մտահոգությամբ է պայմանավորված նաև Արման Սաֆարյանի ատենախոսության թեմայի ընտրությունը:

Աշխատանքում հեղինակի ներկայացրած էրեք գլուխները փորձ են՝ քննելու և կանխանշելու հայկական և ռուսական մուլտիմեդիա հարթակների կայացման ու զարգացման միտումները, վեր հանելու դրանց գործառույթներում ի հայտ եկող առանձնահատուկ կողմերը:

Առաջին գլխում («Մուլտիմեդիային լրագրության առանձնահատկությունները և հիմնախնդիրները») ատենախոսն անդրադառնում է նոր մեդիայի չորս հիմնական ոլորտներին՝ թվային, առցանց, կոնվերգենտ և մուլտիմեդիա՝ կանգ առնելով հատկապես վերջին երկու հասկացությունների սահմանազատման խնդրի վրա: Ելնելով մեդիադաշտում շրջանառվող տեսական ըմբռնումների ընդհանուր ոգուց՝ նա եզրակացնում է, որ կոնվերգենտ լրագրությունը բնորոշվում է հաղորդակցական տարբեր միջոցների մեխանիկական միաեյությունամբ, իսկ մուլտիմեդիա լրագրությանն ուղեկցում են «լրագրողական հանրության աշխատանքի նոր, «սինթեզված» ձևերը», որոնք առավելապես ստեղծագործական մոտեցումների արդյունք են:

Այս տարանջատումը իրավացիորեն դրվում է ժամանակակից մուլտիմեդիա հարթակների գործառութային փոխակերպումների հիմքում, որոնց մասին խոսվում է 1.2 ենթագլխում: Սաֆարյանը հերկայացնում է այդ փոխակերպումները. դրանց

ընդհանրական պատկերի համատեքստում ուրվագծվում են ժամանակակից մուլտիմեդիա հարթակների զարգացման միտումները, ի մասնավորի՝ գովազդի աճը ՋԼՄ-ներում և դրանից բխող հետևանքները, մերօրյա արտակարգ իրադարձություններին, սկանդալային պատմություններին, շոուներին հատկացվող մեծ ուշադրությունը, ինչի հետևանքով «աշխատանքի հերոսներին» ու նրանց գործունեությանը փոխարինելու են եկել «սպառման հերոսները», տեղեկատվական և ժամանցային տարրերի միահյուսման՝ «ինֆոթեյնմենթի» հաճախակի կիրառությունը և այլն: Զարգացման նոր միտումների մեջ ատենախոսն առանձնացնում է նաև նոր մեդիագործիքների հնարավորությունների կիրառման առատությունը՝ ի դեմս սոցիալական ցանցերի և այլն:

Ուշագրավ դիտարկումներով են հարուստ նաև երկրորդ գլխի՝ մուլտիմեդիա հարթակների ուսումնասիրությանն ուղղված երկու ենթագլուխները, որոնցից առաջինը նվիրված է մուլտիմեդիա լրագրության մեջ առկա ժանրաձևաչափային մոտեցումներին, իսկ 2.2 ենթագլուխը՝ ռուսաստանյան և հայաստանյան լրատվադաշտերում լրագրողական նյութի տարածման նոր միջոցների կիրառմանը:

2.1 ենթագլխում ժանրաձևաչափային մոտեցումների և դրանց տարբերակման խնդիրը ատենախոսը քննում է համարժեք դիտանկյունով՝ իրավացիորեն նկատելով, որ ժանրերի և ձևաչափերի նույնացումը հանգեցնում է ավելորդ տարրնթերցումների: Իրականում ձևաչափը, ըստ նրա, «կառուցվածքային հատկանիշներով բնորոշվող երևույթ է, որտեղ կարող են գոյակցել տարբեր ժանրերի տարրեր» (էջ 110): Հետաքրքիր են ատենախոսի դիտարկումները ժանրաձևաչափային երևույթների՝ լոնգրիդի, սթորիթելինգի, հատուկ նախագծերի մասին, որոնք առանձնակի երանգ են հաղորդում այդ հարթակներում մեդիայի զարգացմանն ու նրա հեռանկարներին:

2.2 ենթագլուխը նվիրված է ռուսաստանյան և հայաստանյան մուլտիմեդիա հարթակներում «լրագրողական նյութի տարածման նոր միջոցներին»: Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել և ներկայացրել է երկու երկրների մեդիահարթակներում առաջատար դիրք զբաղեցնող կայքերի վարկանիշային ու այցելությունների ռեյտինգային ցանկերը, կատարել համապատասխան եզրահանգումներ: Դիտարկելով դրանք կոնվերգենտության և մուլտիմեդիա

լրագրության համատեքստում՝ Մաֆարյանն առանձնացնում է դրանց զարգացմանը բնորոշ նուրբ մի տարբերություն. «...Այսօր մենք կարող ենք խոսել ռուսաստանյան մուլտիմեդիային դաշտի և կոնվերգենտ լրագրության (դասական իմաստով) զարգացման նոր փուլի մասին, ինչպես նաև հայաստանյան իրականության մեջ կայացման միտումների ու համացանցային կայքերը ստեղծագործական նպատակներին ծառայեցնելու՝ հայ լրագրողների ձգտումների մասին...»(էջ 84): Մի դեպքում՝ «զարգացման նոր փուլ», մյուս դեպքում՝ «լրագրողների ձգտումներ» բնորոշումներն ընդհանուր առմամբ ճիշտ են ներկայացնում երկու երկրներում գործող մուլտիմեդիա հարթակների պատկերը:

Մի նկատառում. հիմնականում առաջին և երկրորդ գլուխներում ատենախոսը ժամանակ առ ժամանակ մեջբերում է ժամանակակից մեդիագործընթացների մասին հայ մեդիափորձագետների կարծիքները, որոնք հարցազրույցների տեսքով, որպես հավելված, գետեղված են նաև ատենախոսության վերջում: Դրանք, ինչ խոսք, հավաստիություն են հաղորդում ներկայացվող նյութին: Բայց և այնպես ցանկալի կլիներ բուն աշխատանքում այդ հատվածները քննել երկխոսային դիսկուրսի համատեքստում, որի պարագային հիշյալ կարծիքներին կհանդիպադրվեին նաև կոնկրետ հարցի շուրջ ատենախոսի ինքնուրույն դիտարկումները:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է՝ «Մուլտիմեդիային լրագրության մեջ թեմատիկ ձևափոխումների առանձնահատկությունները»: Այն բաղկացած է երկու ենթագլխից, որոնց հետ կապված՝ նույնպես ունեմ մի քանի դիտողություններ:

Նախ՝ թեմատիկ ձևափոխումների խնդիրը մեծ մասամբ քննության է առնված տեսական մակարդակով: Առաջին ենթագլխում այն առնչվում է բնապահպանության ոլորտում հայ հրապարակախոսության ավանդույթներին և դրանց կիրառման հեռանկարներին: Այս խնդիրների մասին դիտարկումները, կարծում ենք, պետք էր մատուցել հրապարակախոսների վերջին սերնդի (Արմեն Հովհաննիսյան, Մարգո Ղուկասյան, Պերճ Զեյթունցյան և ուրիշներ), նաև բնապահպան ակտիվիստների հրապարակումներով և ոչ թե Ստ. Զորյանի, Վ. Անանյանի ավելի քան 60-70 տարի առաջ գրված հոդվածներով: Եվ համակցել դրանք ժամանակակից մուլտիմեդիա հարթակների զարգացման նոր միտումներին, կարծում ենք, ժամանակավրեպ է:

Այնուհետև՝ այս գլխի երկրորդ ենթագլխում շոշափվում են ազգային ինքնության կարևոր բաղադրատարրերին առնչվող հիմնախնդիրներ՝ ի դեմս մշակութային արժեքների, կրթության, գիտության և այլն: Նման տեսական քննարկումները, այն էլ՝ աշխատանքի վերջում, կառուցվածքային որոշակի ապիմետրիա (անհամաչափություն) են առաջացրել, քանի որ ատենախոսությունը սովորաբար ունենում է տեսական գլուխ (հիմնականում՝ առաջին գլուխը), որտեղ մշակված սկզբունքային դրույթները ուղղորդում են հեղինակին հաջորդ գլուխներում: Եվ ապա՝ հատկապես երկրորդ ենթագլխում մշակութային և գիտակրթական խնդիրների քննությունը պետք է ուղեկցվեր ժամանակակից մեդիահարթակներում դրանց կոնկրետ օրինակների վերլուծություններով, ինչը չի արվել:

«Եզրակացություններ» բաժնում ի մի են բերվել ուսումնասիրության հիմնական արդյունքները, արվել առաջարկներ, որոնք բխում են Հայաստանում մուլտիմեդիա հարթակների զարգացման առաջնահերթություններից: Ատենախոսությունն ավարտվում է հավելվածներով և գրականության ցանկով. դրանք ամբողջացնում են ներկայացված հետազոտական աշխատանքը: Հրապարակված հոդվածները համապատասխանում են ատենախոսության թեմային:

Մեր կողմից նշված թերությունները չեն ստվերում ատենախոսի կատարած ծավալուն աշխատանքը, նրա հետազոտական կարողությունները, թեմային առնչվող տեսական և գործնական խնդիրների իմացությունը, ուստի միջնորդում եմ 012 մասնագիտական խորհրդին՝ Արման Ալեքսանդրի Մաֆարյանին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Դավիթ Պետրոսյան

Բանաս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

24. 06. 2022 թ.

ԵԳԳ

Գրքի վաճառք



Վեյթ Կաթիլա Նճիսյան